



ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն



Implemented by:

giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ՆԱՄԱԿ ԱՇԱԿԵՐՏԻՆ

Սիրելի՛ _____

Երբևէ մտածել ես, թե որտեղից են առաջանում թափոնները (աղբը):

Չէ՞ որ բնության մեջ թափոններ չկան:

Դրանք ստեղծում ենք մենք:



ՆԿԱԶԵՑՐՈՒ, ՎԵՐՕԳՏԱԳՈՐԾԻՐ, ՎԵՐԱՄՇԱԿԻՐ

Օրինակ, ցանկացած հնացած, մաշված, չօգտագործելի, կամ ոչ ցանկալի իր, որը մենք դեն ենք նետում, համարվում է թափոն:

Իսկ դու երբևէ մտածել ես, որ թափոնները վնասակար են շրջակա միջավայրի համար:

Սովորաբար թափոնները տեղափոխվում են դեպի հատուկ նախատեսված աղբավայրեր: Իսկ ինչ է տեղի ունենում դրանից հետո: Դրանք սկսում են քայքայվել: Բայց դա այնքան էլ հեշտ տեղի չի ունենում:

Պարզվում է կան թափոններ, որոնց քայքայման համար տարիներ են պահանջում: Այս աղյուսակում կա թափոնների քայքայման համար պահանջվող ժամկետի մի քանի օրինակ՝

Թափոնի տեսակ



Բանանի կեղև

Քայքայման համար պահանջվող ժամկետ

3-4 շաբաթ

Լրագիր կամ թղթե տոպրակ

1 ամիս



Շապիկ

5 ամիս

Բրոյա գուլպա

1 տարի

Ծխախոտի մնացորդ

10 տարի

Կաշվե երկարաճիտ կոշիկներ

40-50 տարի



Թիթեղյա տուփ

80-100 տարի

Ալյումինե տուփ

200-500 տարի



Պլաստիկ շիշ, պոլիէթիլենային տոպրակ

անհայտ է


Ապակե շիշ

անհայտ է (թերևս երբեք)

Բավական չէ, որ թափոնների քայքայման համար լավագույն դեպքում տարիներ են պետք, դրանք նաև քայքայվելով առաջացնում են թունավոր նյութեր՝ մեթան գազ, դիօքսին և ֆուրան: Արդյունքում աղտոտվում է օդը, ջուրը, շրջակա միջավայրը և կենդանական աշխարհը: Դրանք թույներ են, որոնք, ծխի հետ մթնոլորտում տարածվելով, իրենց ճանապարհին աղտոտում են ամեն ինչ՝ հսկայական տարածքներ դարձնելով վտանգավոր մարդկանց և կենդանիների համար:



Օրինակ՝ դիօքսինով աղտոտված օդը շնչելիս կամ դիօքսինով վարակված սնունդ օգտագործելիս, թեկուզ՝ արածող կովի կաթը խմելիս, կարող են առաջանալ մահացու հիվանդություններ:



Պարզվում է, նաև չի կարելի այրել տերևներն ու այգեգործական այլ թափոնները, քանի որ դրանց այրումը նույնպես նպաստում է օդի աղտոտմանը և ածխաթթու գազի (CO₂-ի) արտանետմանը:

Իսկ դու գիտես, որ կարող ես օգնել քո համայնքին այդ հարցում:

- Հիշիր, որ աղբը պետք է թափել միայն դրա համար սահմանված վայրում:
- Պլաստիկ տարաները նետի՛ր քաղաքում տեղադրված հատուկ աղբամանների մեջ:
- Թույլ մի՛ տուր նետել շինարարական աղբը սովորական աղբարկղի մեջ:



- Թույլ մի՛ տուր, որ ձեր տանը կամ բակում այրեն պլաստիկ շէերը և պոլիէթիլենային տոպրակները և բացատրի՛ր մեծերին, որ դրանք այրելու հետևանքով օդում առաջանում են մահացու թույներ:
- Թույլ մի՛ տուր, որ այրեն տերևներ և այլ այգեգործական թափոններ:

- Հավաքի՛ր թուղթը և սովարաթուղթը և հետաքրքրվի՛ր, թե որտեղ կարող ես այն հանձնել՝ վերամշակման նպատակով:

- Թույլ մի՛ տուր, որ պլաստիկ թափոնները, թուղթը կամ սովարաթուղթը կենցաղային աղբի հետ հայտնվեն նույն աղբամանում:



- Աշխատի՛ր հրաժարվել պլաստիկ շէերից և պոլիէթիլենային տոպրակներից՝ դրանք փոխարինելով բազմակի օգտագործման տոպրակներով կամ տարաներով:
- Հետևի՛ր, թե ինչ արագությամբ է լցվում աղբի դույլը ձեր տանը և մտածի՛ր՝ ինչ անել, որ աղբի քանակը նվազի:





ՊԼԱՍՏԻԿ ՏԱՐԱՆԵՐ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ

«Ապագա» ՓԲԸ

ք. Երևան, Հակոբ Հակոբյան փողոց
(094) 56-70-98

ՊԼԱՍՏԻԿ ՏԱՐԱՆԵՐ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ

ԱՁ «Ստեփան Ֆահրադյան»

ք. Վանաձոր, Գործարանային 2/4
(077) 08-04-04
(091) 79-00-00



**ԹՈՒՂԹ, ՍՏՎԱՐԱԹՈՒՂԹ
(ՄԱԿՈՒԼԱՏՈՒՐԱ)**

ԱՁ «Համլետ Ասատրյան»

գ. Շահումյան, 2-րդ փողոց, տուն 10
(077) 75-25-80

«ՀԵՐՄԵՍ-ԱՐՏ» ՍՊԸ

ք. Երևան, Սիլիկյան թաղամաս,
7-րդ փողոց 52/4
(099) 33-90-75
(093) 33-90-75



Աղբի նվազեցման, վերօգտագործման և վերամշակման մասին քո գաղափարները կարող ես նամակով ներկայացնել Վանաձորի քաղաքապետարան:

Հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Էլ. փոստ՝ info@vanadzor.am

Կամ գրիր քաղաքապետարանի ֆեյսբուքյան էջին

Սույն թերթերը լույս է տեսնում «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում ցուցաբերած աջակցության շնորհիվ, որն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության պատվիրակմամբ: Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում ԳՄՀԸ և Գերմանիայի կառավարության դիրքորոշումները: